

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 42/3

3 սեպտեմբերի 2013 թ.

Քննարկվեց <ԳՏԻՉ> ՍՊԸ 21.08.2013 թ-ի դիմում-գանգատը «ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ կողմից 2012 թ-ի մարտ ամսվա համար հաստատագրված վճարի գծով լրացուցիչ պարտավորությունների հաշվարկման դեմ:

<ԳՏԻՉ> ՍՊԸ գանգատում մասնավորապես նշված է.

<ԳՏԻՉ> ՍՊԸ-ն (այսուհետ նաև ընկերություն) 29.02.2012 թ-ին սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով «ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ է ներկայացրել հաստատագրված վճար վճարողի՝ 01.03.2012 թ-ից գործունեության ժամանակավոր դադարեցման վերաբերյալ թվով երեք դիմում-հայտարարություն հետևյալ գործունեության տեսակների համար՝ բիլյարդ խաղի կազմակերպում, հանրային սնունդ և հյուրանոցային տնտեսության օբյեկտների գործունեության կազմակերպում:

Չնայած այն հանգամանքին, որ էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմում-հայտարարություններն էլեկտրոնային եղանակով ներկայացվող հաշվետվությունների համակարգի կողմից բարեհաջող կերպով գրանցվել-ընդունվել են և ունեն վավեր կարգավիճակ, հարկ վճարողի՝ հարկային պարտավորությունների հաշվառման անձնական քարտում հաստատագրված վճարի հաշվեգրումը շարունակվել է նաև մարտ ամսվա համար՝ բանավոր պատճառաբանվելով, որ հայտարարության 6-րդ կետը թերի է լրացված:

Միաժամանակ հայտնում ենք, քանի որ լիազոր մարմնի կողմից սահմանված ձևի դիմում հայտարարության (Հարկային տեսչության 30.12.1998թ. թիվ 01/60 հրամանի հավելված 1) 6-րդ կետի լրացման կարգ որպես այդպիսին սահմանված չէ, նշյալ կետի չլրացման կամ սխալ լրացման հանգամանքը դեռևս չի կարող պատճառ հանդիսանալ հարկային մարմնի կողմից հայտարարության չընդունման համար, քանզի բովանդակային առումով ընկերության ներկայացրած դիմում-հայտարարությամբ վերջինիս՝ հայտարարություն ներկայացնելու պարտավորությունը պատշաճ կերպով կատարված է: Միաժամանակ, «իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն, իրավական ակտի վերնագիրը պետք է համապատասխանի իրավական ակտի բովանդակությանը, իսկ տվյալ դեպքում ակտի վերնագիրը գործունեության դադարեցման մասին է, և հետևաբար նրանում ներառված տողերն էլ պիտի լինեն դրա վերաբերյալ: Առավել ևս, եթե կիրառենք լեզվական տեխնիկայի կանոնները, դիմում-հայտարարության 6-րդ կետում նշված «ընդամենը» բառը ենթադրում է երկու ամսաթվերի միջև ընկած ժամանակահատվածի գումարային (օրերով) արտացոլում, հակառակ դեպքում «Ընդամենը» բառի կիրառումը տեղին չի լինի:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ և 63-րդ հոդվածի դրույթները, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը՝ խնդրում ենք ըկերության կողմից ներկայացրած դիմում-հայտարարությունները հիմք ընդունել հարկային պարտավորությունների առաջադրման ժամանակ, ընկերության անձնական հաշվի քարտից հաստատագրված վճարի մասով պակասեցնել դադարեցված ժամանակաշրջանի՝ 2012 թ-ի մարտ ամսվա համար դադարեցված գործունեությունների մասով հաշվարկված հաստատագրված վճարի պարտավորություններն (հարկի գումարը՝ 206.316 ՀՀ դրամ) ու դրանից բխող տույժերը:

«ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցիչների ներկայացրած փաստարկները,



ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ ընկերության գանգատը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ:

<Հաստատագրված վճարների մասին> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն. <Գործունեության ժամանակավոր դադարեցման դեպքում վճարողն այդ մասին գրավոր դիմում-հայտարարություն տալու միջոցով նախապես տեղեկացնում է իր գտնվելու (հաշվառման, բնակության) վայրի հարկային տեսչության մարմնին՝ նշելով դադարեցման ժամանակահատվածը>:

Քննարկվող դեպքում <ԳՏԻՉ> ՍՊԸ կողմից նախապես՝ 29.02.2012 թ-ին, էլեկտրոնային եղանակով ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ է ներկայացվել թվով երեք դիմում-հայտարարություն բիլիարդ խաղի կազմակերպում, հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեություն և հյուրանոցային տնտեսության օբյեկտների գործունեություն տեսակների մասով գործունեությունը 01.03.2012 թ-ից ժամանակավոր դադարեցնելու վերաբերյալ՝ նշելով դադարեցման ժամանակահատվածները:

Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովը եզրակացնում է, որ ըստ էության, ընկերության կողմից կատարվել է <Հաստատագրված վճարների մասին> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջը, այն է՝ վերոգրյալ գործունեության տեսակների մասով գործունեության ժամանակավոր դադարեցման մասին գրավոր դիմում-հայտարարություններ տալու միջոցով նախապես տեղեկացվել է հարկային տեսչությանը՝ նշելով դադարեցման ժամանակահատվածները: Ընդ որում, դիմում-հայտարարություններում նշված ժամանակահատվածներում ընկերության կողմից գործունեության իրականացման որևէ դեպք հարկային մարմնի կողմից չի արձանագրվել: Հետևապես, վերոգրյալ գործունեության տեսակների մասով դիմում-հայտարարություններում նշված դադարեցված ժամանակահատվածների համար պարտավորություններ չէին կարող հաշվարկվել:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Չ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի հարկային տեսչությանը.

<ԳՏԻՉ> ՍՊԸ անձնական հաշվի քարտից նվազեցնել 2012 թ-ի մարտ ամսվա համար հաստատագրված վճարի գծով լրացուցիչ հաշվարկված պարտավորությունը, ինչպես նաև դրա նկատմամբ հաշվարկված տույժերը:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ

